

ԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Սպառողական գների ինդեքսը Արցախի Հանրապետությունում 2022թ. հունվար-մարտին

Արցախի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ) կազմել է 7.4 %, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 2.0 %:


Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԳ) երկու նիշ մակարդակ	2022թ.			
	մարտը		հունվար-մարտը 2021թ. հունվար- մարտի նկատմամբ	մարտը 2021թ. դեկտեմբերի նկատմամբ
	2021թ. մարտի նկատմամբ	2022թ. փետրվարի նկատմամբ		
	տոկոսային փոփոխություն			ինդեքս
00 Սպառողական գների ինդեքս - ընդամենը	7.4	2.0	7.0	103.9
<i>այդ թվում՝</i>				
01 սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	11.8	2.4	11.4	106.9
02 ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	5.2	0.6	7.5	101.8
03 հագուստ և կոշիկ	10.1	0.1	10.7	99.0
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	2.6	1.2	1.9	101.6
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	2.8	0.3	4.4	101.1
06 առողջապահություն	2.3	0.0	4.2	100.8
07 տրանսպորտ	5.4	2.3	3.8	102.3
08 կապ	10.0	9.7	3.5	109.7
09 հանգիստ և մշակույթ	3.2	0.0	3.6	101.4
10 կրթություն	0.0	0.0	0.0	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	6.3	0.9	6.6	101.8
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.8	1.6	4.3	101.6

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2022թ. մարտին նախորդ ամսվա համեմատ սպառողական գներն աճել են 1.3-2.8%, իսկ մայրաքաղաքում նշված ժամանակահատվածում սպառողական գների մակարդակն աճել է 2.0%-ով:

Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2022թ. մարտին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)




Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունները սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2022թ. մարտին (նախորդ ամսվա նկատմամբ)




Սպառողական գների փոփոխությունները Արցախի Հանրապետությունում ըստ սպառման հիմնական ապրանքախմբերի

	2022թ.			մարտը 2021թ. դեկտեմբերի նկատմամբ
	2021թ. մարտի նկատմամբ	2022թ. փետրվարի նկատմամբ	հունվար- մարտը 2021թ. հունվար-մարտի նկատմամբ	
	տոկոսային փոփոխություն			ինդեքս
Սպառման ապրանքներ	9.2	1.9	9.4	104.6
<i>այդ թվում՝</i>				
Մենդամները և ոչ ակտիվային խմբեր (ներառյալ ակտիվային խմբիչք և ծխախոտ)	11.1	2.3	11.0	106.4
Ոչ պարենային ապրանքներ	5.7	1.2	6.6	101.4
Ծառայություններ	3.4	2.2	1.8	102.5

Սպառողական գների հավելաճը 2012-2022թթ. մարտին



Սպառողական գների ինդեքսի տոկոսային փոփոխությունները նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ 2018-2022թթ.



Սննդամթերքի գներ: 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 11.8% գնաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 2.4%: Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2022թ. մարտին փետրվարի համեմատ սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 1.2-3.7%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Ասկերանում:

Պարենային հիմնական ապրանքախմբերի փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. մարտին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ
	+/-,%		+/-,տոկոսային կետ	
Հացաբովկեղեն և ձավարեղեն	13.0	4.4	1.070	0.360
Միս	7.3	1.9	0.718	0.186
Ձուկ և ծովամթերք	21.7	-0.2	0.110	-0.001
Կաթնամթերք, պանիր և ձու	8.1	1.5	0.447	0.084
Յուղեր և ճարպեր	6.6	3.5	0.160	0.085
Միրգ	6.8	2.9	0.250	0.109
Բանջարեղեն	29.7	0.8	1.536	0.042
Շաքար, մրգախյուս, մեղր, օշարակներ, շոկոլատ և շաքարային հրուշակեղեն	15.3	4.8	0.297	0.093
Սննդամթերք չներառված ուրիշ խմբավորումներում	0.0	-0.1	0.000	-0.001
Սուրճ, թեյ և կակաո	7.6	1.4	0.093	0.017
Հանքային կամ աղբյուրի ջուր, շշալցված խմելու ջուր	2.0	0.6	0.011	0.003
Էթիլային սպիրտ, օղի	5.5	1.7	0.068	0.021
Գինի	-1.1	0.2	-0.008	0.002
Գարեջուր	4.0	0.8	0.016	0.003
Ծխախոտային արտադրատեսակներ	7.4	0.0	0.146	-0.001

Հացի, պլուրի և մակարոնեղենի գները 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ աճել են համապատասխանաբար 12.1%, 14.3% և 11.1%-ով, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 5.0%, 3.1% և 3.5%-ով:


Չվի գինը 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ նվազել է 19.4%-ով, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 14.8%-ով: 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է կարագի 7.3% և բուսական յուղի 3.3% գնաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 3.5% և 4.9% գնաճ:

2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է շաքարի և շաքարավազի 27.4% գնաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 10.3% գնաճ:

Պանիր և կաթնաշոռ ապրանքախմբի գները 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ աճել են 20.1%-ով, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 2.1%-ով:

2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է տավարի մսի, թռչնամսի, գառան և խոզի մսերի համապատասխանաբար 5.1%, 7.3%, 14.6% և 21.4%, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 2.0%, 4.1%, 0.5% և 0.1% գնաճ:


Բանջարեղենի գների փոփոխությունները 2020-2022թթ. հունվար-մարտին



Թարմ կաղամբի գինը 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ աճել է 2.4 անգամ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 0.1% գնաճ:

2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է կարտոֆիլի 44.1% գնաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 2.4% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2020-2022թթ. հունվար-մարտին



Ոչ պարենային ապրանքների գներ: 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 5.7 տոկոս գնաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ՝ 1.2 տոկոս:


Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. փետրվարին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ
	+/-,%		+/-,տոկոսային կետ	
Հագուստ	11.5	0.0	0.272	0.001
Կոշիկ տարբեր տեսակի	8.4	0.3	0.140	0.005
Նյութեր բնակարանի նորոգման և սպասարկման համար	10.8	1.8	0.097	0.016
Կահույք և կահավորանք	4.5	0.8	0.012	0.002
Գորգեր և հատակի ծածկեր	8.4	0.3	0.003	0.000
Մանածագործական արտադրատեսակներ օգտագործվող տնային տնտեսությունում	3.7	1.0	0.011	0.003
Խոշոր կենցաղային սարքեր, էլեկտրական և ոչ էլեկտրական	5.0	0.3	0.038	0.002
Կենցաղային փոքր էլեկտրական սարքեր	5.9	2.4	0.003	0.001
Ապակե ամանեղեն, ճաշասպասք և տնային կահկարասի	4.6	0.4	0.016	0.001
Կարճատև օգտագործման կենցաղային ապրանքներ	1.3	0.0	0.023	0.001
Դեղագործական ապրանքներ	3.9	0.0	0.160	0.000
Բժշկական նշանակության այլ արտադրանք	5.9	0.0	0.020	0.000
Վառելանյութեր և քսանյութեր անձնական փոխադրամիջոցների համար	3.0	0.6	0.157	0.034
Գրասենյակային պարագաներ և զծագրության համար նյութեր	8.9	-0.4	0.010	0.000
Էլեկտրական սարքեր անձնական օգտագործման	6.3	-0.7	0.004	0.000
Ոսկերչական զարդեր, ձեռքի և այլ ժամացույցներ	7.3	0.9	0.018	0.002
Անձնական գործածության այլ ապրանքներ	2.2	0.3	0.016	0.003

Հանրապետությունում 2022թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի 2.3% և 9.9% գնաճ: 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 24.0% և 36.7%-ով, իսկ 2021թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է բենզինի 0.1% և դիզելային վառելիքի 10.6% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2019-2022թթ.

2015թ. նկատմամբ



Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2022թ. մարտին 2021թ. մարտի համեմատ գրանցվել է 3.4 տոկոս հավելաճ, իսկ 2022թ. փետրվարի համեմատ 2.2 տոկոս :

Որոշ ծառայությունների ապրանքախմբերի փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. մարտին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ	2022թ. մարտը 2021թ. մարտի նկատմամբ	2022թ. մարտը փետրվարի նկատմամբ
	+/-,%		+/-,տոկոսային կետ	
Հագուստի մաքրում, նորոգում և վարձույթ	0.0	0.0	0.000	0.000
Կոշիկի նորոգում և վարձույթ	0.0	0.0	0.000	0.000
Բնակարանի նորոգման և սպասարկման ծառայություններ	6.4	1.0	0.009	0.001
Կահույքի, տնային գործածության առարկաների նորոգում	0.0	0.0	0.000	0.000
Բժշկական ծառայություններ	1.0	0.0	0.021	0.000
Տրանսպորտի ծառայություններ	10.7	5.7	0.294	0.155
Հեռախոսային և ֆաքսիմիլային կապի ծառայություններ	10.0	10.0	0.492	0.492
Մշակութային միջոցառումների հետ կապված ծառայություններ	0.0	0.0	0.000	0.000
Հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	3.1	0.0	0.011	0.000
Սպասարկման ծառայություններ (ռեստորանների, սրճարանների և համանման կազմակերպությունների)	7.9	1.0	0.109	0.014
Հյուրանոցային ծառայություններ	-0.8	0.5	-0.002	0.002
Վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայություններ	5.9	1.5	0.032	0.008
Տրանսպորտի ապահովագրություն	8.3	8.3	0.020	0.020
Ֆինանսական այլ ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում	5.6	5.6	0.011	0.011

2022թ. մարտին փետրվարի համեմատ տրանսպորտային ծառայությունների սակագների 5.7% հավելաճը պայմանավորվել է հանրապետությունում տաքսիներով և վարորդով վարձակալված մեքենաներով մարդատար տրանսպորտի ծառայությունների գների 19.9% թանկացմամբ: